

## ԱՌԱՑ ԴԱԻԱՆԱՆՔԻ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Լ Ի ց Վ Ե Ա Լ Հ Ե Ն Ր Ի Ւ Լ Ս Ե Ն Կ Ա Ւ յ ի

### ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

(Շարունակութիւն <sup>1)</sup>)

17 ապրիլի

Այսօր եկայ Պլոշով և ամեն բան երեակայածիցս տարրեր գտայ: Մի կառք վարձեցի ու առաւօտւայ եօթին ճանապարհ ընկայ Վարշաւացից, հաշւելով, որ ժամի ութին մօտ տեղ կը հասնեմ: Հօրաքոյրս ինձ ասել էր, որ իւր հիւրերը վազ են վեր կենում: Երէկ- ան պէս էլի շարունակ սիրոս տրորւում էր և մոփերը անհան- դիսա վիստում էին գլխումն: Խնքս ինձ խօսք տւեցի, որ ոչ մի ծրագիր չեմ կազմիլ ոչ Անելկային ողջունելու համար, ոչ էլ այնու- հետև նրա հետ վարւելու համար: Թող լինի այնպէս, ինչպէս ոկտոք է լինի և ինչպէս կը պատահի,—վճռեցի ինձ ու ինձ: Սակայն չէի կարողանում չը մտածել, թէ արդեօք ինչպէս կը լինի, ինչպէս է Անելկան, ինչպէս կը հանդիպի ինձ, ինչ կ'ուզենայ զգալ տալ ինձ, ինչ ուզզութիւն կը տայ մեր յարաբերութիւններին: Որով- հետև ես ինքս դրա նկատմամբ ոչինչ չէի վճռել և չէի ուզում վճռել, հաւատացած էի, չը զիտեմ ինչու, որ նա անպատճառ մի

1) Տես ԱՄՊԵՐԸ 1892 թ. ԱՆ 1: 2, 3, 4, 5, 6, 7—8:

բան վճռած կը լինի: Նախատեսելով այդ, ես երբեմն նրա վերաբերմամբ թշնամական տրամադրութեան մէջ էի ընկնում, երբեմն էլ, մոտածելով՝ որ ինչ էլ լինի նա էլ իրան ազատ չի կարող զգալ իմ ներկայութեամբ, կարեկցութեան նման մի բան էի սկսում զգալ դէպի նա: Երևակայութիւնս այն աստիճան զբաղւած էր նրանով, որ նա կարծես աչքիս առաջին կանգնած լինէր: Վերին աստիճանի պլաստիկաբար լիշտում էի նրա ճակատը ծածկող շագանակագոյն մազերը, նրա երկար թերթեռնքները, աչքերը, փոքրիկ ու նրբագիծ դէմքը: Աշխատում էի գուշակել, թէ ինչպէս կը լինի հագնւած: Միուքս էին գալիս նրա այս ու այն խօսքերը, շարժումները, հագուստները, նրա դէմքի արտայալութիւնները: Զարմանալի յամառութեամբ միտքս էր գալիս մանաւանդ այն րոպէն, երբ նա մի օր վերևի սենեակներից վերադարձաւ հիւրասենեակը՝ բորբոքւած դէմքին պուդր քսած: Վերջապէս այդ լիշտութիւններն այն աստիճան սաստկացան, որ գրեթէ տեսիւք դարձան: «Ելի հաւաքւեցին զիսիս, — մտածեցի ինձ ու ինձ և, աշխատելով ազատել այդ պատկերներից, սկսեցի կառապանի հետ խօսել: Հարցրեցի նրանից, պսակւած է արդեօք: Նա պատասխանեց, — ևառանց կնկայ ինչպէս կ'ապրելո, ու յետոյ ինչ որ շարունակեց, բայց ես չը լսեցի, որովհետեւ իսկոյն աչքովս ընկան Պլոշովի՝ հեռուում նշմարւող կաղամախները: Ինձ համար բոլորովին աննկատելի կերպով արդէն մի քանի վերստ ճանապարհ էինք եկել:

Պլոշովը որ տեսայ, սրտիս անհանդստութիւնը աւելի սաստկացաւ, մոքերս էլ աւելի արարութեամբ սկսեցին պտոյս գալ զիսում: Աշխատում էի ուշադրութիւնս դարձնել արտաքին առարկաների վրայ, իմ բացակայութեանս միջոցին կատարւած փոփոխութիւնների, ճանապարհի կողքերին նոր շինւած տների վրայ: Մեքենայաբար կրկնում էի ինձ ու ինձ, թէ շատ լաւ եղանակ է և գարունքը շատ շուտ է սկսել: Որը ճիշտ որ հիանալի էր, պայծառ առաւօտ էր և օդում զգացւում էր վաղորդեան կազդուրիչ զովութիւն, տների առաջին ծաղկազարդ կանգնած էին լսնձորենիները, որոնց տակին ծաղիկը փռւած էր ձիւնի նման: ինձ կարծես շրջապատում էր գեղարւեստադիտական նոր դազրոցի նկարների մի շարք: Ուր նայում էի, տեսնում էի լուսաւոր ու թափանցիկ «plein-air» (բաց օդ),

որի պայծառ խորքում շարժւում էին դաշտում ու իրանց տների առաջին բանող մարդկանց կերպարանքները։ Զարմանալի բան է, այդ բոլորը տեսնում էի, այդ բոլորը նկատեցի, բայց չը կարողացայ տողորւել այդ տպաւորութիւններով, ոչ էլ լիովին անձնատուր լինել նրանց։ Այդ տպաւորութիւնները մի տեսակ կորցրել էին իրանց թափանցողութիւնը և կետրոնանում էին ու դիտակցւում միայն ուղեղիս մակերեսոյթի վրայ, չը կարողանալով թափանցել աւելի խոր, ուր ծածկւած էին բոլորովին ուրիշ մոքեր։ Ուշադրութեան այդպիսի երկրաժան դրութեան մէջ ես մօսեցայ Պլոշովին։ Յանկարծ ինձ վրայ վչեց լորենիների ծառուղու հովը, Հեռուից երևում էին հօրաքրոջս տան պատուհանները։ Յիշ ու ցան մոքերս աւելի անհանգստութեամբ սկսեցին պատյան գալ զլիսում։ Զեմ կարող ճիշտն ասել, թէ ինչու փոխանակ բակը մանելու, դարպասի մօտ կանգնացրեցի կառքը և ոտով գնացի զէսի պատշգամբը՝ տանելով հետո կառապանի շնորհակալիքները։

Ընդհանրապէս էլ չեմ կարողանում հասկանալ թէ ինչու այնքան անհանգիստ էի. — թերեւս այն պատճառով, որ այդ՝ ինձ յայսնի տան մէջ սպասում էր ինձ մի անյատ բան, որը սակայն արագիկական կատով կապւած էր իմ անցեալի հետ։ Բակովը անցնելիս կուրծքս այնքան սասարիկ էր սղմւում, որ ժամանակ առ ժամանակ շունչս բռնւում էր։ Այս ինչ զահրումար էր, — կրինում էի մոքումս։ Կառքը դարպասի մօտ կանգնացրած լինելուս պատճառով ոչ ոք առաջս զուրս չեկաւ։ Սրահում ոչ ոք չը կար։ Մտայ սեղանատուն և վճռեցի այնտեղ սպասել մինչև մերոնք ներս դային։

Այդ շուտով պէտք է տեղի ունենար, որովհետեւ սեղանը դցած էր, ամանները դարսած և սամովարը քչփչում էր ու թշթշում փաթիլ-փաթիլ գոլորշի արձակերով զէսի վեր։ Դարձեալ ամենաչին մանրամասնութիւն անդամ չը խուսափեց ուշադրութիւնից։ Նկատեցի, որ սենեակումը ցուրտ էր ու համեմատաբար մութ, որովհետեւ պատուհանները նայում էին զէսի հիւսիս։ Մի քիչ անցած ուշադրութիւնս կենարոնացրի այն բանի վրայ, որ սենեակի երեք պատուհաններիցը մութ տախտակահածի վրայ երեք լուսաւոր շերտեր են ընկնում։ յետոց սկսեցի դիտել իրբե նոր բան պահարանը, որ ինձ ծանօթ էր երեխայ ժամանակից։ ապա չիշեցի այն խօ-

սակցութիւնը, որ մի ժամանակ տեղի էր ունեցել իմ ու Սնեա-  
տինակու մէջ, երբ մենք պատուհանովք նայում էինք նրա կնոջն ու  
Անելկային, որոնք տաք ոտնամանները հազած՝ ձեան միջով գնում  
էին ջերմանոց։

Վերջ ի վերջոյ դատարկութեան զգացմոնք տիրեց սրտիս ու  
տիրութիւն իջաւ իւմ վրայ նստեցի պատուհանի մէջ, որպէս զի  
լոյսին մօտիկ լինէի ու զիտէի պարտէզը։ Բայց այդ բոլորը չազա-  
տեց ինձ այն երկրաժանութիւնից, որի մասին վերը լիշեցի, — ես  
այդ բոլորի հետ միասին ու միաժամանակ մտածում էի, որ շու-  
տով, գուցէ մէկ-երկու բռպէից յետոց, կը տեսնեմ նրան, որ պէտք  
է բարեկեմ նրան, խօսեմ հետո ու այնուհետև տեսնեմ նրա հետ  
ամեն օր մի քանի ամսւայ ընթացքում։ Գլխումն իրար յետևից  
պտոյս կին զալիս զանազան հարցեր — «ի՞նչպէս կը լինի, ի՞նչ  
կը լինի»։ Կան մարդիկ, որոնք վախից խենթային քաջագործու-  
թիւններ են անում, — ինձ հետ էլ յաճախ պատահում է, որ ներ-  
քին անհանգստութիւնս, անվճռականութիւնս ու ապագայի ան-  
յայտութեան պատճառած զգացմոնքս տեղի են տալիս բուռն ան-  
համբերութեան ու զայրութիւ։ Այս անգամ էլ այդպէս եղաւ։ Նախ-  
կին Անելկայի ու այժմեան պանի Արոմիցկայի մէջ եղած տարրե-  
րութիւնը այնպէս պարզեց ինձ համար ինչպէս երբէք դրանից  
առաջ չէր պարզել։ Թէկուզ լուսինը վարսիդ զարդ շինես, թէ-  
կուզ հարիւրապատիկ աւելի գեղեցիկ, աւելի գրաւիչ լինես քան  
ես կարող եմ երեւակայել, ինձ համար դու այնուամենայնիւ ոչինչ  
կը լինես կամ աւելի վաս՝ խորշելի բան կը լինես։ Եւ իմ զայ-  
րոյթս աւելի ևս սաստկացաւ, որպէս ետև, չը գիտեմ ինչու, ինձ  
յանկարծ սկսեց թւալ, թէ նա միմիայն նրա համար կը գայ այժմ  
և կը տեսնեի ինձ հետ ապագայում, որպէս զի ինձ համար միշտ ցան-  
կալի ու միշտ անմատելի։ Ակը տեսնենք — պատասխանեցի նրան  
մաքում այնպիսի տպաւորութեան ներքոյ, թէ ես այդ կնոջ հետ  
ինչ որ մի տարօրինակ ու անորոշ մենամարտ պէտք է ունենամ,  
ինչ որ մի կոփու, որի մէջ միաժամանակ թէ կը յաղթեմ թէ  
կը յաղթեմ, որովհետև կը կորցնեմ նրա յիշառակը, բայց նորից  
ձեռք կը բերեմ հանգիստս։ Ինձ այդ բուղէին թւում էր, թէ բա-

ւականաչափ ոյժ ու արիութիւն ունեմ դիմագրելու ամենասաստիկ յարձակման անգամ;

Այդ ժամանակ դուռը կամաց բացւեց և ներս մտաւ Անելիան նրան որ տեսայ զլխումն աղմուկ բարձրացաւ ու մարմարովս սարսուռ անցաւ: Այդ բոսկին աշքիս առջև եղող կինը ճիշտ է պանի կրոմիցկայի անունն էր կրում, բայց իմ նախկին Անելիայի քաղցր, սիրելի դէմքն ու աննկարագրելի հրապոյըն ունէր: Գլխումն տիրող քաօսում մի ձայն ամենից բարձր էր հնչում և գոռում էր, - «Անելիա, Անելիա, Անելիա»: Խակ նա ինձ չէր նկատում կամ ուրիշ մարդու տեղ էր ընդունում, որովհետեւ լոյսը յետեխս կողմիցն էր: Միայն այն ժամանակ, երբ ես խօսեցայ նրան, նա աչքերը բարձրացրեց, կանգ առաջ՝ տեղումը մեխուածի նման - ու նկարագրել անգամ չեմ կարող այն՝ վախի, շփոթութեան, վրդովման ու խոնարհութեան արտայացառութիւնը, որ երեկոց նրա երեսին: Նա այնքան սասարիկ գունաթափեց, որ վախեցայ թէ ուշքից կը գնայ: Զեռքը սեղմելիս կարծես սառոցի կտոր էի սեղմում ձեռքում: Ամեն բան սպասում էի, բայց ոչ այդպիսի ընդունելութիւնն Մի բոսկ առաջ երգում կուտէի, որ նա ինձ պատահելիս որ և է ձեռվ ինձ զգալ կը տայ թէ հետո խօսովը պանի կրոմիցկան է: Եւ յանկարծ ոչ մի այդպիսի բան: Առաջին՝ յուզւած ու վախորած կանգնած էր իմ վաղեմի Անելիան: Ես եմ նրան անբախտացրել, ես եմ եղել մեղաւորը, հարիւրապատիկ մեղաւորը, խակ այժմ նա այնպէս էր նայում ինձ կարծես ինքն էր ինձնից ներողութիւն խնդրում: Սրտիս այնքան սաստիկ կերպով տիրեցին նախկին սէրիս և զզջման ու կարեկցութեան զգացմունքները, որ ինձ բոլորովին կորցրեցի: Գլխումս այնքան խելք էր մնացել միայն, որ չը գրկեցի նրան, չը սեղմեցի կուրծքիս ու չը պահեցի հանգստացնել նրան այնպիսի խօսքերով, որով մարդ խօսում է իւր սիրելի էակի հետ: Միրտս լիքն էր այդպիսի խօսքերով: Եւ ես այն ասաիման յուզւած ու շփոթւած էի այդ անակնկալ ու անենթաղրելի հանդիպմամբ, - պանի կրոմիցկայի տեղ Անելիային տեսնելովս, - որ բերանս ոչ մի խօսք չէր գալիս ու միայն սեղմում էի նրա ձեռքը: Սակայն պէտք էր խօսել, ուստի խելքիս մնացորդները զլուխս հաւաքելով հարցրեցի նրանից խեղդւած ու կարծես ուրիշ մարդու ձայնով:

— Հօրաքոյլը քեզ չե՞ ասել որ եկել եմ:

— Հօրաքոյլը... ասաց... — պատասխանեց Անելիան իւր վրայ ճիբ  
գործ դնելով:

Եւ երկուսս էլ դարձեալ լոեցինք: Զգում էի, որ պէտք էր  
շարունակել խօսակցութիւնը, հարցնել մօր ու իւր առողջութեան  
մասին, բայց լեզուս կարծես կապւել էր: Եթէ մէկը ներս մտնէր  
ու մեզ ազատէր այդ անտանելի դրութիւնից, կը կարծէի թէ եր-  
կընքիցն է իջել: Վերջապէս ներս մտաւ հօրաքոյլս՝ կառավարչի  
ամենափոքր որդու, ջանէլ բժիշկ Խւասուվակու հետ, որ մի ամսից  
ի վեր հօրաքրոջս տանն է կենում պանի Ցելինայից մօտիկ լինելու  
համար: Անելիան իսկոյն քաշւեց գնաց սեղանի մօտ թէց ածելու,  
իսկ ես բարեեցի հօրաքրոջս ու սկսեցի հետը խօսել: Այդ միջո-  
ջում ես արդէն բոլորովին ուշքի եկայ և մենք նստեցինք թէց  
խմելու:

Սկսեցի հարց ու փորձ անել պանի Ցելինայի առողջութեան  
մասին: Հօրաքոյլս պատասխանելիս խօսքի սկզբին՝ վերջին՝ բժշկի  
կարծիքն էր հարցնում, իսկ նա ինձ հետ խօսում էր այն թեթև  
արհամարհական եղանակով, որով նոր-թխւած գիտնականները վե-  
րաբերում են դէպի: համբակները և որով դեմոկրատները, որոնք  
նախանձայոց պաշտպանում են իրանց արժանապատութիւնը, նաև  
այն ժամանակ, երբ վիրաւորել ցանկացեղ չկայ, պատասխանում են  
այն մարդուն, որին արիստոկրատ են համարում: Նա իմ աչքիս շատ  
անձնապատճեն մարդ երեւեց: Ես նրա հետ աելի քաղաքավարի եղա-  
նակով էի խօսում քան նա ինձ հետ: Այդ ինձ մի քիչ զւարճու-  
թիւն էր պատճառում և հնարաւորութիւն էր տալիս կարգի բերել  
միտքս, որ՝ աչքս Անելիայի վրայ քցելուն պէս շփոթւում էր: Ժա-  
մանակ առ ժամանակ սեղանի սարքի արանքով նայում էի նրան  
ու յուօհատւած կրկնում մոքում, — և ոյն դիմագծերն են, ոյն  
փոքրիկ դէմքն է՝ ճակատին հովանի մագերով, նոյն Անելիան է  
զրեթէ երեխայութիւնից նոր գուրս եկած: Նոյն սէրն է, նոյն եր-  
ջանկութիւնը, բայց ոչ իմը և յաւիտեանս կորած: Այդ տպառ-  
րութեան մէջ չափից վեր քաղցրութիւն կար՝ խառն նոյն քան սաս-  
տիկ կակիծի հետ: Անելիան արդէն քիչ թէ շատ զսպել էր յրւդ-  
մունքը, բայց դեռ ևս կարծես ահը սրտումն էր: Սիրտ արեցի մի

քանի անգամ դիմեցի նրան ու հարցրեցի մօր առողջութեան մասին՝ մեր յարաբերութիւնը մի քիչ աւելի հարթ ճանապարհի վրայ գնելու ու աւելի ազատ դարձնելու համար։ Մասամբ այդ ինձ յաջողեց։ Նա մինչև անգամ ինձ ասաց, — «Մայրիկը քեզ որ տեսնի կ'ուրախանայ։ Ձէի հաւատում որ այդ ճիշտ լինի, բայց աչքերո փակած էի ականջ գնում նրա խօսքերին, որովհետեւ ոչ մի երաժշտութիւն ինձ համար նրա ձայնի քաղցրութիւնը չէր կարող ուսենալ։ Հետզհետէ սկսեցին իրար հետ աւելի ազատ խօսել։ Հօրաքոյրս հիանալի արամադրութեան մէջ էր, մէկ՝ իմ գալուս պատճառով, մէկ՝ էլ այն պատճառով, որ արդէն գնացել էր Կլարայի մօտ ու Կլարան խոստացել էր նրան՝ կոնցերտ տալ։ Նրա մօտից դուրս գալիս հօրաքոյրս պատահել էր երկու ուրիշ բարեգործական հիմնարկութիւնների խնամակալուհիների։ Նրանք ուշացել էին, և հէնց այդ էր հօրաքոյրս ուրախութեան գլխաւոր պատճառը։ Նա ինձնից հարց ու փորձ էր անում Կլարայի մասին, որը նրա վրայ չափազանց լաւ ապաւորութիւն էր գործել։ Նախաճաշի վերջին պատասխանելով հօրաքոյրս հարցերին սկսեցի մի քանի բան պատմել ճանապարհորդութիւններից։ Հօրաքոյրս զարմանում էր, որ մինչև անգամ Խոլանդիա էլ եմ գնացել և այնտեղի մասին հարց ու փորձ անելուց յետոյ ասաց։

— Մարդ պէտք է յուսահաստած լինի, որ այնտեղ գնայ։

— Հա, այն ժամանակ շատ վատ էի, պատասխանեցի ես։

Անելիկան այդ րոպէին նայեց ինձ վրայ և ես նրա աչքերում նորից նկատեցի ահ ու խոնարհութիւն։ Եթէ նա ուղղակի ձեռքը կոխէր կրծքիս մէջ ու բռնէր սիրտս, չէր կարող դրանից աւելի սասափիկ ճմինլ։ Որքան աւելի խոր էր համոզմունքս, թէ նա ինձ կ'ընդունի յաղթական սառնութեամբ, չարախնդացութեամբ դէպի իմ անբախտութիւնս ու իւր գերազանցութեան արհամարհալից գիտակցութեամբ, այնքան աւելի սաստիկ էր յուզում ինձ ու միւնոյն ժամանակ գետին տապալում նրա այդ հրեշտակալին կարեկցութիւնը։ Խարուսիկ էին իմ բոլոր հաշիներս, բոլոր ենթագործութիւններս։ Ես կարծում էի որ, եթէ մինչև անգամ նա ուզենար իմ վերաբերմամբ պանի Կրոմիցկա չը լինել, այդ չէր յաջողիլ նրան և դրանով նա կը խորշեցնէր ու կը վիրա որէր ինձ, և սակայն

այժմ տեսնում էի, որ նա մարդու գնացած կնոջ տպաւորութիւն անդամ չէր գործում: Ես ինքս ինձ պէտք է լիշեցնէի, որ նա արամբի է, բայց այդ լիշողութիւնները զգւանքով չէին լցնում սիրոս, այլ միայն անսանելի դառնութեամբ:

Ինութիւնս այնպէս է, որ բարոյապէս տանջելիս՝ միշտ սիրում եմ փորփորել ինձ տանջող վէրքը: Այս անդամ էլ ուզեցի նոյնն անել ու խօսք բանալ նրա մարդու մասին: Բայց չը կարողացաց զգում էի, որ այդ դաժան ու անպատճառ բան կը լինի: Դրա փոխարէն ցանկութիւն յայտնեցի պանի Յելինացին այցելելու: Անելիան գնաց նրանից հարցնելու, թէ արդեօք կարող է լնդունել ինձ, ու մի քիչ անցած վերաբառնալով ասաց.

—Մայրիկը ինդրում է որ այժմ և եթ գնաս մօտք:

Ես ու Անելիան գնացինք տան միւս կողմը, հօրաքոյըս էլ մեզ հետ Պահանջ էի զգում Անելիկային մի որ և է քաղցր խօսք ասելու, որ հանգստացնէր նրան, բայց հօրաքրոջիցս քաշւում էի. սակայն մի քիչ յետոյ վճռեցի, որ լնդհակառակը աւելի լաւ կը լինի, եթէ նրան ասելիքս հօրաքրոջս ներկայութեամբ ասեմ, ուստի պանի Յելինայի սենեակը տանող դռան առաջ կանգ առաջ ու ասացի.

—Չեռքդ տուր ինձ, սիրելի քոյրիկ...

Անելիան ձեռքը մեկնեց գէպի ինձ: Զգում էի, որ նա շնորհակալ է ինձնից քոյրիկ խօսքիս համար, որ ահապին քար զլորւց նրա սրտի վրացից և որ այդպէս սրտանց ձեռքս սեղմելով ուզում է ինձ ասել.

— Օհ, բարեկամ լինենք միմեանց, ամեն բան ներենք մէկ-մէկի:

— Յուսամ, հաշտ կապրէք իրար հետ, - տեսնելով այդ մըմը-ռաց հօրաքրոյս:

— Անշուշտ, անշուշտ Լէօնը շատ բարի է, — պատասխանեց Անելիան:

Եւ իրօք այդ բռպէին սիրոս լի էր բարութեամբ: Պանի Յելինայի սենեակը որ մոտաք, նրան շատ սիրալիր կերպով բարեկեցի: Նա ինձ պատասխանեց մի քիչ բռնազրօսիկ կերպով. ողարզ երեւում էր, որ եթէ չը վախենար հօրաքրոջս վիրաւորել բոլորովին սառը կընդունէր ինձ: Բայց ես չը նեղացայ նրանից: Նրա զայրոյթը իմ զէմ: աւելի քան արդարացի էր: Գույց նա համոզած է, թէ ես

էլ նրա տոհմական կալւածի ծախելումը մասամբ մեղաւոր եմ, որովհետև եթէ ևս պէտք եղած ժամանակը ուրիշ տեսակ վարւած լինէի, այդ բոլորը կարելի է տեղի չ'ունենար:

Նա շատ փոխւած երկեց աչքիս: Բաւական ժամանակից ի վեր ամենեւին չի վեր կենում անիւաւոր բաղկաթուից, որով լաւ օրերը սպառէզն են դուրս բերում նրան: Դէմքը, որ առաջ էլ նուրբ ու քնքոց էր, այնպէս նրբացել է կարծես մոմից շինած լինի: Երկում է, որ մի ժամանակ շատ դեղեցիկ ու ամբողջ կեանքում շատ անբախտ է եղել:

Սկսեցի առողջութիւնիցը հարցնել և յոյս յայտնեցի, թէ գարնան կենարար ազգեցութիւնը նրան էլ կը կազդուրի: Լսելիս տիտոր ժպտում էր ու վլուխը թափ տալիս, իսկ վերջը աչքերումը արտասուքի երկու խոշոր կաթիլներ երկեցին, որ նա չը սրբեց ու թողեց որ հանգիստ վլորւեն երեսովլը:

Եետոյ զաւնալով դէպի ինձ հարցրեց.

—Գիտե՞ս, որ Գլուխովը ծախւած է:

Երկում էր, որ այդ միտքը ոչ մի բոսէ նրան ազատ չէր թողնում: Երկում էր, որ այդ նրա յարատեւ տանջանկը, նրա մշտական դարդը, նրա անբախտութիւնն էր:

Անելիան նրա հարցը որ լսեց՝ իսկոյն կարմրատակեց: Այդ անդուր կարմրութիւն էր,—զայրոյթից ու ամօթից յառաջացած կարմրութիւն: Իսկ ևս պատասխանեցի:

—Գիտեմ: Բայց կամ այդ անդառնալի բան չէ և ուրեմն ոչինչ չէք կորցրել, կամ թէ անդառնալի է և այդ դէպքում պէտք է հնազանդւել Աստծու կամքին:

Անելիան երախտագէտ հայեացք զցեց ինձ վրայ, իսկ պանի Ցելինան ասաց.

—Ես այլ ևս զուր յոյսերով չեմ խաբում ինձ:

Սայայն ճիշտ չէր ասում, —նա զեռ ինքն իրան խաբում էր: Աչքերը բերնիցս չէր հեռացնում, սպասելով որ մի խօսք ասէի, որ հաստատէր նրա սրտի խորքում տարածւող յոյսը: Յանկանալով մինչև վերջը մեծահոգի լինել, ասացի:

Ամեն մարդ պէտք է տեղի տայ անհրաժեշտութեանը և դժւար է ում և իցէ մեղադրել դրա համար, բայց միւս կողմից ինձ թուում

է, սիրելի մօրաքոյր, թէ աշխարհումս ոչ մի խոչընդուռ չը կայ, որին անկարելի լինէր յաղթել տոկունութեամբ ու համապատասխան միջոցներով:

Յետոյ սկսեցի ասել, թէ լսած կամ, որ եղել են դէպքեր, երբ ձեւական պայմանագրով չը կատարւած լինելու պատճառով վաճառումը անվաւեր է համարւել: Խնչ թագցնեմ, ասածս սուս էր, բայց տեսնում էի, որ այդպէս խօսելով պանի Ցելինայի սրտից ջուր էի խոնում: Բացի այդ ես կողմնակի կերպով պաշտպանում էի Կրոմիցկուն, աւանց սակայն յիշելու նրա անունը: Ասենք իմ ներկայութեամբ դեռ ոչ ոք մի անգամ նրա անունը չեր տեել:

Պէտք է սակայն ճիշան ասել: Մեծահոգութիւնը միայն մասամբ էր ինձ այդ խօսքերը թելադրողը, իսկ զլսաւորապէս այդպէս խօսելուս պատճառն այն էր, որ զգում էի, թէ այդպիսով զրաւում եմ դէպի ինձ Անելիկային և ինքս երեսում բարութեան ու ազնուութեան փայլի մէջ:

Եւ իրօք Անելիկան շնորհակալ էր ինձնից, որովհեաւ, երբ որ ես ու հօրաքոյրս դուրս էինք գնում սենեակից, նա վագեց մեր յետելից ու ձեռքը մեկնելով ինձ ասաց.

— Ենորհակալ եմ քեզնից մօրս կողմից:

Ի պատասխան ես լուռ մօտեցրի նրա ձեռքը շրթունքներիս: Հօրաքոյրս նոյնպէս խանդաղատւել էր իմ բարութիւնից: Բաժանելով նրանից ես սիզար ծխելով գնացի պարտէզը՝ տպաւորութիւններս ու մոքերս կարգի ընթելու: Բայց այնտեղ պատահեցի բժիշկ Խւաստովսկուն, որ դուրս էր եկել իւր առաւօտեան զրօսանկը բայց կատարելու: Որովհետեւ ուզում էի Պլշչովում եղողների ամենքի համակրութիւնը գրաւել, մօտեցայ նրան ու սկսեցի հարց ու փորձ անել պանի Ցելինայի առողջութեան մասին՝ այն ակնածութեամբ, որով առհասարակ վերաբերւում են գիտուն ու լուրջ մարդկանց: Ցեսայ, որ այդ սաստիկ շոյեց նրա ինքնասիրութիւնը. մի քիչ անցած նա դէն գցեց իւր դեմօկրատակուն յուշառութիւնը, որ պատրաստ էր ամեն մի չնչին խօսքից հնդկահաւի պէս փետուրները տնկել, և սկսեց խօսել Անելիկայի մը: Հիւանդութեան մասին մի տեսակ շտապողական ախործանքով, որ սովորաբար ցոյց են տալիս դիտութեան երիտասարդ աղեղուները. որոնք դեռ ես չեն շնել կաս-

կածների ծուխից։ Նա խօսքի զլիսին՝վերջին լատիներէն բառեր էր գործ ածում, կարծես մի ուրիշ բժշկի հետ խօսելիս լինէր։ Նրա յաղթանգամ ու առողջ կերպարանքը և խօսքի ու հայեացքի ոյժը ինձ վրայ նպաստաւոր տպաւորութիւն դորձեցին. Նա իմ աշքում հանդիսանում էր ներկայացուցիչ այն նոր, անպորտվեօվ հանճարներին ամենեին նմանութիւն չ'ունեցող, սերունդի որի մասին մի ժամանակ շատ էր խօսում ինձ Սնեատինսկին։ Մառաստանի երկար ծառուղիներով մանգալով մենք ի վերջոց սկսեցինք այսպէս կոչող ինտելլիգենտ խօսակցութիւն, որ կայանում է զանազան գիտնականների անուններ ու գոքերի վերնագիրներ յիշելում։ Խւաստովսկին ինչ առվագին ինչ որ դիտի, անշուշտ ինձնից լաւ գիտի, բույց ես նրանից շատ եմ կարդացել, ուստի կարծում եմ, սաստիկ զարմացած պէտք է լինէր ինձ վրայ։ Երբեմն-երբեմն դրեթէ դժկամակութեամբ էր նայում ինձ, կարծես թէ նա ուրիշի իրաւունքների ոսնակուում էր համարում այն, որ մի մարդ, որին նա արիստօկրատների կարգն էր զցել, թոյլ է տալիս իրան տեղեկութիւն ունենալ այս ու այն դրէի կամ հեղինակի մասին։ Սակայն միւս կողմից նրա համակրութիւնը գրաւեցի հայեացքներիս ազատութեամբ։ Ճիշտ է իմ ազատամտութիւնս կայանում է նրանում, որ համբերող եմ դէպի ամեն մի ուղղութիւն, որովհետեւ կասկածով եմ վերաբերում դէպի ամեն բան։ սակայն հէնց միայն այն, որ ինձ նման հարստութեան ու դիրքի տէր մարդը միանգամայն յետադիմական համոզմունքներ չունի, բոլորովին իմ կողմը գրաւեց երիտասարդ արմատականի համակրութիւնը։ Խօսակցութեան վերջում մենք իրար այնպէս էինք վերաբերում, ինչպէս կարող են վերաբերել մէկ-մէկի ճանաչած ու հասկացած մարդիկ։

Կարծում եմ, որ մի ժամանակ ես բժիշկ Խւաստովսկու համար՝ կանոնից բացառութիւն կազմող բան կը գառնամ։ Վաղուց եմ նկատել, որ ինչպէս մեզանում ամեն մի աղնւական ունի մի հրէայ, որին բացառում է դէպի հրէաները զգացած ընդհանուր հակակրութիւնից, այնպէս էլ ամեն մի գեմօկրատ ունի իւրարիստօկրատը, որի վերաբերմամբ բացառական համակրութիւն է տածում։

Բաժանւելիս բժիշկ Խւաստովսկուց հարցրեցի եղբայրների մասին։ Ասաց, թէ մէկը Պլոշովում դարեցրի դործարան է հիմնել որ

դի ունի, որովհետև հօրաքոչը այդ ինձ առաջ զրել էր. միւսը տարբական զրերի խանութ է բաց արել, իսկ երրորդին, որ վերջացրել է առևտրական դպրոցում, կրոմիցկին հետը տարել է իրեւ օգնական:

— Մեր մէջ ամենից լաւ գարեջրի գործարանատէրի բաներն են գնում, — ասաց երիտասարդ բժիշկը, — սակայն բոլորս էլ լաւ ենք աշխատում և յօյս կայ, որ մի բան դուրս կը գայ մեր աշխատանքից: Մեր բախտն էր, որ մեր հայրը կորցրել է հարատութիւնը, թէ չէ «Glebae adscripti» կը լինէինք, նստած կը մնայինք իւրաքանչիւրս իւր զիւղում և վերջ ի վերջոյ մեր հօր նման կը մնանկանալինք:

Զը նայելով որ ուշքս ոչ միայն զբաղւած, այլ ուղղակի զրաւած էր ուրիշ բանով, բաւական հետաքրքրութեամբ էի ականջ դնում բժշկին: Այ, մտածում էի ինձ ու ինձ, սրանք ոչ քաղաքակրթիւնից չափից վեր նրբացած են, ոչ էլ միւս կողմից թաղած են խաւարում: Դուրս է գալիս, որ մեզնում կան մարդի՛, որոնք կարող են մի բան անել և որոնք միջին ու առողջ օղակ են կազմում թուլամորթութեան ու բարբարոսութեան մէջ: Թերեւ այդպիսի խաւեր միայն մեծ քաղաքներումն են գոյանում և օրէցօր լցում են մնանկացած ազնւականների զաւակներով, որոնք անհրաժշտաբար իւրացնում են աշխատանքի բուրժուական աւանդութիւններն, իսկ իրանց կողմից բերում են ամուր ջղեր ու մկանունքներ: Ակամայ յիշեցի այն օրը, երբ Մնեատինսկին ամնդուխքների վրայից գուռում էր իմ յետելից: Չաեզնից այլ ևս բան :ի դուրս դաշ, բայց ձեր զաւակներից դեռ կարող են մարդիկ դուրս գալ: միայն թէ դուք պէտք է նախ և առաջ մնանկանաք, ապա թէ ոչ ձեր թուներն էլ ոչ մի գործի չեն կազիլու: Եւ ահա պան Խւաստովակու որդիկը գործի կպել են ու աշխատում են մարդ դաւնալ միայն իրանց անձնական ոյժերով: Ես էլ, եթէ որ հարուստ չը լինէի, ստիպւած պէտք է լինէի մի ճար գտնել զլուխս պահելու և գուցէ մէջս զարգացնէի այն վճռելու եռանդը, որից զուրկ եմ եղել կեանքում:

Բժիշկը շուտով հեռացաւ ինձնից, որովհետև մի ուրիշ հիւանդ էլ ունէր Պլոշովում, որին պէտք է այցելէր: Այդ հիւանդը Պլոշովցի գիւղացիներից մէկի որդին էր, աւարտել էր Վարշաւայի հողեւոր

դպրանոցը և այժմ դպիր էր: Նա թօքախտի վերջին աստիճանում էր: Հօրաքոյրս նրան զետեղել էր իւր տան վիլիգէլում և ամեն օր Անելիայի հետ հիւանդատես էր գնում: Այդ իմանալով, ևս էլ գնացի նրա մօտ և սղասածիս հակառակ մահամերձ հիւանդի փոխարէն տեսայ նիհար, բայց կարմրաթուշիկ դէմքով և կինսալից ու ուրախ զւարթ մի պատանին Սակայն, բժշկի ասելով, այդ՝ հանդող ճրազի վերջին փայլվլոցն էր: Պատանի դպրին խնամում էր մայրը, որ ինձ տեսնելուն պէս հօրաքրոջս պատճառով դլիսիս օրհնանքների այնպիսի հեղեղ թափեց, որ միջին կարող էլ խեղդուել:

Անելիան այդ օրը չեկաւ հիւանդին տեսութեան. բոլոր ժամանակը մօտ մօտ էր: Միայն ճաշին տեսայ նրան: Ճաշին ներկայ էր և պանի Յելինստն, - նրան ամեն օր իւր բազկաթոռով քերում են ճաշելու: Եատ բնական էր, որ Անելիան դրանից առաջ բոլոր ժամանակը մօտ էր անցրել. սակայն ինձ թւաց, թէ նա խուսափում է ինձ հետ հանդիպելուց: Մեր յարաբերութիւնները մի ժամանակ անշուշտ մի կերպ կը յարդարեն, սակայն շատ լաւ հասկանում եմ, որ սկզբում մեր մէջ ազատ յարաբերութիւններ չեն կարող լինել: Անելիան այնքան զգայուն, տպաւորուղ ու բարի սիրուունի, որ չի կարող անսարբերութեամբ վերաբերւել դէպի այն դրութիւնը, որի մէջ ես ու նա գտնուում ենք. միւս կողմից էլ նա չունի լնկերական կեանքի այն փորձառութիւնը, որի շնորհիւ շատերը կարողանում են ամենավճարալից պայմաններում արտաքուստ ազատ յարաբերութիւններ պահպանել: Այդպիսի փորձառութիւն ձեռք է բերում հասակն առնելուց յետոց, երբ զդացմունքների կենսակիր ազրիւրները սկսում են ցամաքել, իսկ հոգին յարմարում է արտաքին պայմաններին:

Գալով ինձ, ես հասկացրեցի Անելիային, որ ոչ քէն կայ սըրտում նրա դէմ, ոչ ատելութիւն, այն պատճառով, որ սիրաս այդպէս թելադրեց ինձ: Անցեալի մասին երբէք չեմ խօսիլ նրա հետ և այդ պատճառով այսօր չէի աշխատում առիթ գտնել նրա հետ առանձին խօսելու երեկոյեան: Թէի ժամանակ մենք ընդհանուր բաների մասին էինք խօսում՝ արտասահմանի կենքից, մեր հասարակութեան կեանքից: Հօրաքոյրս էլի հարց ու փորձ էր անում Կլարայի մասին, որ նրան սաստիկ հետաքրքրեցրել է, ևս ինչ որ

գիտէի պատմեցի նրա մասին. և հետզհետէ խօսքն անցաւ ընդհան-  
րապէս արտիսաների վրայ: Հօրաքոյրս արտիստների վրայ նայում  
է իրեւ այնպիսի մարդկանց վրայ, որոնց Աստւած նրա համար է  
ստեղծել, որ բարեգործական ընկերութիւնների անդամները ժամա-  
նակ առժամանակ կարողանան նրանց օգնութեամբ հանդէսներ սար-  
քել յօդուա չէ աւորների: Ես պնդում էի, թէ արտիստը, — եթէ որ  
ունենայ մաքուր սիրտ, լի՛ ոչ ողորմելի անձնասիրութեամբ, այլ  
արեւեստասիրութեամբ, — կարող է աշխարհիս ամենաերջանիկ մարդը  
լինել որովհետև շարունակ գործ է ունենում այնպիսի բանի հետ,  
որ անհուն է և բացարձակապէս կատարեալ: Կեանքը ծնեցնում է  
ամեն տեսակ չարիքներ, գեղարւեստից միմիայն երջանկութիւն է  
բզիսում: Այդ իմ կարծիքս է և սառուցւած է դիտողութիւններով:  
Անելիան իմ կողմու էր և եթէ այդ խօսակցութիւնը գրի եմ անց-  
նում, այդ այն պատճառով է, որ ինձ վրայ սաստիկ տպաւորու-  
թիւն գործեց նրա արած մի շատ հասարակ, բայց ինձ համար շատ  
մեծ նշանակութիւն ունեցող նկատողութիւն: Երբ որ մենք խօսում  
էինք գեղարւեստի պատճառուած գւարճութեան մասին, նա ասաց,  
«Երաժշտութիւնը ամենալաւ սփոփանքն է»: Նրա այդ խօսքերը  
ինձ թւացին ակամայ խոստովանութիւն, թէ նա բախտաւոր չէ և  
թէ ինքը այդ հասկանում է: Ասենք առանց նրա խոստովանելուն  
էլ այդ ինձ համար բոլորովին անկասկածելի է:

Նրա դէմքն անգամ բախտաւոր կնոջ դէմք չէ: Նա առաջւայ  
վրայ կարելի է ասել աւելի ևս գեղեցկացել է, արտայալտութիւնը  
կարծես հանգիստ լինի ու մինչեւ անգամ պարզ, բայց այդ պարզու-  
թիւնը նեքսեից ցոլացող ուրախութեան լոյսի պայծառութիւն չէ  
և նրանում մի տեսակ կետրօնացումն է երևում, որ առաջ չկար  
նկատեցի, որ նրա քունքերը մի քիչ գեղնաւուն են՝ փղոսկրի նման:  
Նարունակ նայում էի նրան, որովհետև այդ ինձ անպատմելի գւար-  
ճութիւն էր պատճառում, կամ աւելի ճիշտ ասած, զարթեցնում  
էի յիշողութեանս մէջ նրա պատկերը և մի տեսակ տարօրինակ,  
գրգռաղ ու միենոյն ժամանակ քաղցր զգաց: Անքով ստուգում էի,  
որ այդ՝ նոյն դէմքն է, նոյն երկայն թերթեւունքները, նոյն աչքերը,  
որոնք սե չեն, բայց սեի պէս են երևում, նոյն բերանը՝ աղւա-  
մազաս վերին շրթունքով: Զէի կարողանում կշատանալ այդ՝ յիշողու-

թիւններիս իրականութիւն զառնալուցը։ Անելկայի մէջ ինձ համար այն ասաիման անդիմաղբելի դրաւիչ մի բան կայ, որ եթէ նրան առաջուց երբեք տեսած չը լինէի և նրան հազար հատ աշխարհիս ամենազեղեցիկ կանանց մէջ զնէին ու ինձ առաջարիելին ընտրութիւն անել, զգում եմ, որ ուղակի կ'երթայի նրա մօտ ու կ'ասէի, —սա է իմ ընտրածը։ Թերեւս նրանից գեղեցիկները կան աշխարհում, բայց այնպիսի կին, որ աւելի համապատասխանէր այն կնոջ նախատիպարին, որ ամեն մի տղամարդ կրում է իւր երեակայութեան մէջ, ինձ համար չկայ։ Կարծում եմ, նա չէր կարող չը տեսնել, որ նրան դիտում էի ու հիանում էի նրա վրայ։

Պոշովից ճանապարհ ընկայ իրիկնաղէմին։ Ազնքան սաստիկ շշմել էի օրւայ ընթացքում ստացած տպաւորութիւններիցս և առաջւան ենթազբութիւններս ու յոյսերս այն աստիճան ջարդ ու փշուր էին եղել, որ ճանապարհին չէի կարողանում ու դեռ այժմ էլ չեմ կարողանում ըստ իմ սովորութեան խորասուզել ինքս իմ մէջ։ Պանի Կրոմից կային էի սպասում աեսնել, տեսայ Անելկային։ Մի անգամ էլ եմ այդ գրում։ Միմիայն Աստծուն է յայտնի, թէ ինչ կարող է դրանից ծագել ինձ ու Անելկայի համար։ Դրա մասին մտածելիս միաժամանակ համ սաստիկ երջանկութիւն եմ զգում, համ էլ կարծես մի տեսակ հիասթափութիւն։ Ինչ էլ լինի տեսականօրէն ես չէի սխալում, որովհետեւ իրաւոնք ունէի սպասել, որ նրա մէջ՝ մարդու գնալուց յետոյ կը կատարեն այն հոգեկան փոփոխութիւնները, որոնք անհրաժեշտաբար կատարւում են ամեն մի կնոջ մէջ, և իրաւոնք ունէի սպասել, որ նա գոնէ այն զգացնել կտար ինձ, թէ ուրախ է որ ինձ չի ընտրել։ Աշխարհումն չկայ մի ուրիշ կին, որ ընդունակ լիներ ինքն իրան զրկել այդպիսի գլարձութիւնից... Իսկ քանի որ ես ինքս ինձ լաւ եմ ճանաչում, ճանաչում եմ իմ տպաւորւող բնութիւնս ու ջղերս, ինչով ասէք երգում կուտէի, որ այդ գէպքում Պոշովից կը վերադառնայի զառնութեամբ, հեգնութեամբ ու զայրոյթով լի սրտով, բայց՝ բժշկւած։ Եւ սակայն սպասածիս բոլորովին հակառակը դուրս եկաւ Անելկան այնքան պարզ հոգի ու այնքան անհուն բարի սիրտ ունի, որ այն չափը, որով ես չափում էի մարդկանց բարութիւնը, նրա բարութեան համար շատ փոքր է դուրս դալիս։ Ինչ կը լինի այժմ,

ինչ կը պատահի ինձ, չեմ ուզում պատասխանել այդ հարցերին: Իմ կեանքս էլ կարող էր վճիռ ու հանդարտ գետի նման թափակել այն ծովը, ուր հոսում են բոլոր գետերը, իսկ այժմ ջրվէժի պէս գահավիժւում է անդունդը: Սակայն ինչ լինում է լինի: Ամենավատ դէպքում սաստիկ անբախտ եմ լինելու: Առաջ էլ վարդերի վրայ չի հանգչում՝ այս ողորմելի հոգովս: Միտս չէ, կարծեմ հայրս էր ասում ինձ, թէ կեանքի ընթացքում մի որ և է բան պէտք է անի ընութեան օրէնքի համաձայն: Եթէ աճելու է, կ'աճի Մինչև անդամ անապատում՝ երկրի խորքերում ծածկւած կենսական ոյժերը տեղ-տեղ, օազիսներում արմաւի ծառեր են բուսցնում:

## Ապրիլ 21.

Իմր թէ Վարշաւայումն եմ կենում, բայց չորս օր շարունակ Պլոշովումն էի: Յելինան այժմ առաջւանից լաւ է, բայց լատիշ գլուխը անցեալ օրը մեռաւ: Բժիշկ Խւաստովսկին նրա հիւանդութիւնը բժոքերի տուբերկուլոզի հիանալի ընթացքն է անւանում և դժւարութեամբ է կարողանում ծածկել սրտի ուրախութիւնը, որ ինքը այդ հիանալի ընթացքի վերջը գուշակել է մի ժամանակ մօտաւորութեամբ: Մենք հանգուցեալին այցելութեան գնացինք մահից տասներկու ժամ առաջ: Կատակներ էր անում մեզ հետ և սիրտը լի էր յոյսերով, որովհետև տաքութիւնը պակասել էր, որ խսկապէս նրա թուլանալուցն էր յառաջացել: Երէկ առաւտոեան եւս ու Անելիան պատշգամբումը նառած էինք, որ խեղճ դպրի մայրն եկաւ ու սկսեց նրա մահւան մասին պատմել այն առանձին գնդշկական ձեռվ, որի մէջ վիշտը և կատարւած իրողութեան հետ կատարելապէս հաշտուելը միախառնուում են իրար հետ: Եմ կարեկցութեան մէջ հետաքրքրութիւն էլ կար, որովհետև մինչև այժմ ժողովրդի հետ եմ գործ ունեցել և նրա վրայ քիչ եմ ուշադրութիւն դարձրել: Ի՞նչ տարօրինակ լեզով են խօսում այդ մարդիկը: Աշխատում էի միտքս պահել նրա խօսքերը, որպէս զի յետոյ գրի անցնէի: Պառաւ գեղջկուհին, մենք որ բարեեցինք, առանց խօսելու ընկաւ իմ ու Անելիավիոտները, իսկ յետոյ աչքերը ձեռքով ձեկելով լաց ու շիւանը դրեց:

— Թ' Փ, Յիսուս Քրիստոս; ՆՓ, Մարիամ Աստւածածին! Մե-

ռաւ, ձեռքիցս զնաց խեղճիկ երեխէս: Չուզեց հօրն ու մօր մօտը մնայ, զնաց Աստծու մօտ: Աղջիկ-պարոնների աշխատանքը չ'օգնեց խեղճին: Գինին էլ զուր էին տալիս, զինին էլ չ'օգնեց: Ով Յիսուս Քրիստոս, ով Աստւած իմ, ով Աստւած:

Նրա ձայնը անկասկած մայրական անկեղծ վիշտ էր արտայացտում: բայց ինձ զարմացրեց այն հանգամանքը, որ այդ սուդ ու շիւանը կարծես մի տեսակ ընդունւած, սովորական դարձած ձևով էր կատարւում: Մինչեւ օրս տեսած չը կամ իրանց սիրելիներին ողբացող գեղջկուհիներ, բայց երդում կ'ուտեմ, որ նրանք բոլորն էլ այդտեսակ պէտք է ողբալիս լինեն՝ ոնց որ թէ մի տեսակ գեղջկական կարգ լինէր սահմանւած դրա համար:

Անելկան, արտասուքն աշքերին և այն աննկարագրելի բարութեամբ, որ միմիայն կանանց է յատուկ, սկսեց հարց ու փորձ անել մահւան մանրամասնութիւնների մասին, զգալով որ պատմելը խեղճինկայ սիրալը կը թեթեւացնի: Եւ իրաւ պառաւը սկսեց պատմել գրեթէ յօժարութեամբ.

—Տէր-հայրը որ սրբութիւնը տւեց ու զնաց, ասացի, —որդի ջան, մեռնելու ես թէ ողջ ես մնալու, Աստծու կամքն է: Դու պատրաստեցիր մահն ընդունելու, ինչ անելու էիր՝ արեցիր, հիմա մի քիչ քնիր: Ասաց, լաւ, նանի ջան, ու քննեց, ինձ վրայ էլ նինջեկաւ, ասենք գոհանամ Աստծուց, նրա կամքն էր, բայց երեք գիշեր աշքս չէի խփել, հալից ընկել էի: Հաւախօսի ժամանակն էր, որ հալւորն եկաւ ինձ զարթնեցրեց: Մենք երկուսով նստել էինք կողքին. նա դեռ խորը քնած էր, սկի շարժ չէր գալիս: Հալետրին ասում եմ, այ մարդ, մեռած չը լինի: Ասում է, հէնց իմանաս մեռել է: Կասաց ձեռ տւեց երեխիս, նա քնից զարթնեց ու ասաց հրմա աւելի լաւ եմ: Մի քիչ ժամանակ հանդիսու պառկած մնաց, յետոյ սկսեց աշքերն առաստաղին քցած ծիծաղնել: Այդ որ տեսայ, բարկութիւնս եկաւ ու ասացի, իմ աղքատութեան վրայ ես ծիծաղում համ, շան լակուու Խոկ խեղճը իմ աղքատութեան վրակ չէր ծիծաղում, մահւան վրայ էր ուրախանում, որովհետեւ շուտով սկսեց ծանր շունչ քաշել ու արեւածագին հոգին տւեց:

Այդտեղ նա նորից սկսեց հեկեկալ ու յետոյ հրաւերեց, մեզ զնալ տեսնել ննջեցեալին: Ասում էր, որ արդէն նրան հագցրել էր

ու նա բայնպէս սիրուն էր ոնց որ քաշած պատկեր լինէր։ Անել-կան ուզում էր հետը գնալ բայց ես չը թռղեցի. ասինք՝ պառաւն էլ շուտով մոռացաւ իւր խնդիրքն ու սկսեց խօսել իւր չքատրութեան մասին։ Նրա մարդը մի ժամանակ ունեոր գիւղացի է եղել, բայց նրանք իրանց ունեցած-չունեցածը ծախսել են իրանց տղային ուսում տալու վրայ։ Ունեցած հողները օրավար-օրավար ծախսել են հարեան գիւղացիներին, այնպէս որ այժմ միայն խրճիթն է մնացել իրանց, իսկ հող՝ ամենելին։ Հազար երկու հարիւր բուրլի ծախսած կը լինեն։ Յոյս են ունեցել, որ ծերութեան օրերը տղան տիրութիւն կ'անի իրանց, բայց Աստւած տղային ձեռներիցն առաւ։ Պառաւը իսկը գեղջկական խոնարհանգութեամբ (résignation) յայտնեց մեզ, որ ինքն ու մարդը արդէն պատրաստեթիւնները տեսել են և տղային թաղելուն պէս կ'երթան մուրալու։ Խնչպէս երեսում էր այդ նրան ամենելին չէր սարսափեցնում։ Նա այդ բանի մասին մինչեւ անգամ մի տեսակ ներքին զւարճութեամբ էր խօսում, և վախենում էր միայն, որ շինական վարչութիւնը ուշացնէր վկայականը, որը չը գիտեմ ինչի համար պէտք էր նրան։ Նա պատմելիս հազար ու մի իրական մանրամասնութիւններ խառնում էր Յիսուս Քրիստոսի ու Մարիամ Աստւածածնի անւան և լացի ու հառաջանքների հետ։

Անելիկան վազեց տուն ու մի քիչ անցած վերադարձաւ հետը փող բերելով, որ ուզում էր տալ պառաւին, բայց իմ դիխումն մի ուրիշ միտք ծագեց, որ ինձ շատ յաջող էր ժւռում։ Անելիկայի ձեռքը բռնեցի ու պառաւին դիմելով հարցրեցի։

— Հազար երկու հարիւր բուրլի էք ծախսել ձեր որդու ուսման վրայ։

— Հրամանքս, պարոն։ Միտք էինք անում, թէ տէրտէր կը դառնայ, ծուխ կ'ունենայ, մեզ էլ կը պահի, տիրութիւն կ'անի, բայց Աստւած ուզեց, մեռնեմ նրա կամքին, որ մենք տէրտէրի տանը կինալու տեղակ ժամի դռանը նստենք։

— Ես ձեզ հազար երկու հարիւր բուրլի կը բաշխեմ։ Նորից տուն ու տեղ դրէք և հանգիստ ապրէք ձեր խրճիթումը։

Խսկոյն կը տայի փողը, բայց ձեռիս չը կար. սակայն միտք ունէի հօրաքրոջիցս վերցնել պէտք եղած գումարը և պառաւին

ասացի, որ մի ժամկց յետոյ գայ փողը ստանալու։ Նա այն աստիճան զարմացել էր, որ երկար ժամանակ աչքերը չուռ նայում էր երեխիս, իսկ յետոյ համարեա գոռալով ընկաւ ոտներս։ Սակայն շուտով ազատւեցի նրա ձեռքից, զլխաւորապէս շնորհիւ այն հանգամանքի, որ նա շտապում էր վազէվազ դնալ մարդու մօտ ու հաղորդել նրան ուրախալի լուրը։ Ես ու Անելկան մնացինք մենակի նա էլ յուզել էր ու սկզբում խօսք չէր գտնում զգացածն արտայատելու և միայն բաւական ժամանակ անցնելուց յետոյ սկսեց կրկնել։

— Որքան բարի՞ ես, որքան բարի՞ ես։

Բայց ես ուսերս թափ տեցի ու պատասխանեցի նրան այնպիսի տանով, ոնցոր թէ խօսելիս լինէի բոլորովին բնական ու ինձ համար նշանակութիւն չունեցող բանի մասին։

— Ես, սիրելի Անելկա, այդ ոչ բարութիւնիցս արեցի, ոչ էլ այն մարդկանց լաւութիւն արած լինելու համար, որոնց առաջին անգամն եմ տեսնում։ Ես այդպէս վարեցի միմիայն այն պատճառով, որ դու հետաքրքրւում ես նրանցով և որ յոյս ունէի, թէ այդքեզ դւարճութիւն կը պատճառի. թէ չէ ողորմութիւն կը տայի ու ճանապարհ կը գցէի։

Առածս բոլորովին անկեղծ էր ու ճշմարիտ։ Այդ լատիշները ինձ համար նոյնքան նշանակութիւն ունեին որքան ամեն մի աղքատ. միւս կողմից՝ ես նոյնքան հեշտ ու հանգիստ տւածիս կրկնապատիկն ու եռապատիկը կը տայի։ Անելկային զւարճութիւն պատճառելու համար։ Սակայն ես այդ դիտմամբ ասացի. ես գիտէի, որ այդպիսի խօսքեր շատ սաստիկ են ներգործում կանանց սրտերի վրայ, որովհետեւ սիրոյ խոստովանութեան ձև չունենալով՝ գրեթէ հաւասար են խոստովանութեան։ Այդ միւնոյնն է թէ մարդ ասի կնոջ,—քո խաթեր ամեն բան կանեմ, որովհետեւ դու ինձ համար ամեն բանից վեր ես։ Եւ որ զլխաւորն է, ոչ մի կին չի կարող պաշտպանել այդպիսի խոստովանութեան դէմ, ոչ էլ իրաւունք ունի նեղանալ։ Իսկ ես բայց դրանից այն պատճառով էի ուզում այդ յայտնել Անելկային, որ իրօք այդպէս էի զգում։ Միայն թէ մեղմացրեցի խօսքերիս գաղտնի իմաստը նրանով, որ այնպիսի տոնով ասացի ոնցոր թէ ամենասովորական ու ինքն ըստ ինքեան հասկանալի բանի մասին լինէր խօսք։ Սակայն Անելկան հասկացաւ

թէ ինչ էի ու զում ասել, որովհետև աշքերը կախ դցեց ու չէր իմանում ինչ պատասխանէր: Վերջ ի վերջոյ սաստիկ շփոթւած ասաց, որ պէտք է գնաց մօր մօտ ու հեռացաւ ինձնից:

Ես շատ լաւ դիտակցում եմ, որ ազդպէս վարւելով, Անելկայի հոգու մէջ՝ նրան խորթ և տագնապիչ մոքեր եմ լզացնում: Բայց զարմացմամբ նկատում եմ, որ թէւ այդ մի կողմից վրդովում է խիղճն և տանջող ահ է զարթեցնում սրտում: Թէ անդորրութիւնից կը զրկւի այն էակը, որի համար պատրաստ եմ կեանքս զոհել, սակայն միւս կողմից այդ ինձ մի տեսակ արինը բւուշտ զւարճութիւն է պատճառում: ոնցոր թէ բաւարարութիւն տալիս լինէի մարդուս բնածին աւերիչ բնադրման: Բացի այդ, համոզւած եմ, որ հազար էլ դիտակցեմ թէ շարիք է արածս, հազար էլ խղճահարուեմ, միւնոյնն է, օգուտ չունի, անելիքս կանեմ: Զգացմունքներս այնքան բուռն են, որ ձեռքից չի գալ ու չեմ կարող այդ ճանապարհի կէսին կանգ առնել, ևս առաւել որ այդ կինը, անդիմադրելի, աննկարագրելի թովիչ ազդեցութիւն է գործում ինձ վրայ: Հիմա որ իսկ և իսկ այն Հնդիկի նման եմ, որ ջրվէժի հոսանքից տարւելուց յետոյ վայր է դրել թիերն ու տրւել է յորձանքի ոյժին: Մինչև անգամ չեմ մտածում իմ մեղաւորութեան մասին, չեմ մտածում նրա մասին, որ ամեն ինչ կարող էր ուրիշ կերպ լինել, որ ինձ մնում էր միայն ձեռքս մեկնել, որպէս զի տիրանալի այն կնոջը, որի մասին այժմ ասում եմ ինձ ու ինձ,—էլ ում համար արժէ ապրել եթէ ոչ նրա համար. էլ ում արժէ սիրել եթէ ոչ նրան: Սկսում եմ ղետերմինիստ դաւնալ և յաճախ ինձ թւում է, թէ ուրիշ կերպ չէր կարող լինել, թէ իմ կենսական անընդունակութիւնը պատրաստւել ու զարգացել է մի քանի սերունդների շնորհիւ, որոնք վաղուց արդէն սպառել են մեր տոնմի կենսական պաշարը, թէ ես այնպիսի մարդ եմ եղել ու եմ, ինչպէս լինելու էի ու պէտք է այժմ լինէի, և թէ ոչինչ չի մնում ինձ անել եթէ ոչ վայր գնել թիերս:

Այսօր առաւօտեան ես, Անելկան ու հօրաքոյրս զնացել էինք դպրի թաղմանը: Նղանակը հիանալի էր. թաղման հանդէսը առաւօտեան վերջացաւ և չը նեղացրեց տիկիններին, որովհետեւ մեր տանից մինչև եկեղեցին ու հանգստարանը հեռու չէ: Տարօրինակ տե-

սարան է ներկայացնում գիւղական լուղարկաւորութիւնը, որ սկսում է քահանայից ու սայլի վրայ դրած դագաղից և վերջանում է գիւղացիների ու գեղջկուհիների խուռն բազմութեամբ։ Բոլորը միախին երգում են չափից վեր տխուր եղանակներ, որ լալիս կարծես մարդ մի տեսակ քաղղէական երաժշտութիւն է լսում։ Գնացքի վերջում տղամարդիկ ու կանացք զրոյց են անում քնէած, ծորուն ձայնով, միշտ սկսելով իրանց ասելիքը՝ «Էհ, փուչ աշխարհ» խօսքերով։ Այդ խօսքերը ամեն բողէ ականջովս էին դիպչում։ Նոյնպէս տարօրինակ տպաւորութիւն են գործում թաղման նման հանդէսի ժամանակ աղջկերքանց զլսաշորերի վառ զոյները։ Մինչև եկեղեցի սիների (քանիա) ծառուղիով էինք զնում, և երբ զնացքը ծառերի անջրպետներում արեի առաջն էր ընկնում, այդ զլսաշորերը բոցավառում էին զեղին, կարմիր ու կապոյտ զոյներով, որ ամբողջ հանդէսին ուրախ տեսք էր տալիս, այնպէս որ եթէ քահանան, դագաղն ու գիւղապողի<sup>1)</sup> հոսոր չը լինէր, մարդ կը կարծէր թէ պսակ ևն տանում եկեղեցի։ Ես նկատեցի նոյնպէս, թէ որքան ուրախութեամբ են գիւղացիք մասնակցում լուղարկաւորութեան։ հանդէսին։ Առհասարակ մահը նրանց վրայ որ ասես տպաւորութիւն չի գործում։ Թերեւս նրանց հայեացքով մահը յաւիտենական հանդիսաւ է աշխատանքից։ Երբ որ կանգնեցինք գերեզմանի շուրջը, ես նրանց երեսներին նկատեցի միմիայն հետաքրքրութիւն և կենտրոնացած ուշադրութիւն դէպի ծխակատարութիւնը։ ոչ մի հետք, ոչ մի նշոյլ թէ այդ՝ անողոք վախճան է, որից յետոյ սկսում է ինչ ո՞ր մի ասրսափելի ու անյատ բան։ Նայում էի Անելկային այն ժամանակ, երբ նա կռացաւ։ մի բուռը հող վերցնելու, որպէսզի զցէր գերեզմանի վրայ։ Նա մի քիչ գունատ էր։ արեն էլ ուղղակի երեսին էր ընկնում, այնպէս որ նրա թափանցիկ դէմքի արտայայտութիւնը կարելի էր կարդալ գրքում տղած տողերի նման։ Խնչով ասէք երգում կ'ուտէի, որ նա այդ բոպէին իւր մահւան մասին էր մտածում։ Խնձ միանգամայն անհեթեթ ու հրէշաւոր թւաց այն

<sup>1)</sup> Դիապուուղ (ՊՈՅՋԵՎԵԼՅԱԿԵ) լուղարկաւորութեան ժամանակ շաղեն տալիս ճանապարհին տանից մինչև եկեղեցի ու եկեղեցոց՝ պերեզմանատան։

միտքը, թէ այդ դէմքը, այդ վառվուուն դէմքը՝ լի բուռն երիտասարդութեամբ, որ երևում է այդ վերին շրթունքի աղւամազում, այդ երկար թերթեսունքներում, այդ գրաւիչ անհատականութեան մէջ, — կարող էր երբ և իցէ սպրտնել, փայտանալ ու մնալ յաւիտենական խաւարում: Ոչ, այդ այն բուգէին ինձ միանգամայն անհարին բան էր թւում:

Եւ սակայն ես ինձ այնպէս էի զգում կարծես մողերս ցրտից սառած լինէին գլխումս: Ինձ ու ինձ մտածեցի, որ առաջին ծէսը, որին ես ու Անելիան միասին մասնակցում ենք Պոշովում՝ թաղումն է: Ինչպէս որ դէպի գիտնական բժշկականութիւնը հաւատը կորցրած մահամերձ հիւանդը պատրաստ է հաւատալ պառաւական գեղերին, այնպէս էլ մերձիմահ հիւանդ, ամեն բանի կասկածով վերաբերող հոգին պատրաստ է հաւատալ մինչև անգամ նախապաշարմունքներին: Երեք ոչ ոք այնքան մօտիկ չէ միստիկականութեան անդունդին, որքան բացարձակ սկեպտիկը: Նրանք, որոնք կասկածով են վերաբերում դէպի կրօնական ու հասարակական իդէալները, նրանք, որոնք կորցրել են հաւատը դէպի գիտութեան ու մարդկացին բանականութեան ոյժը, անթիւ՝ ամենաբարձր զարգացման տէր մարդի՛լ, որոնք տանջուում են առանց ուղեցոյց աստղի, զուրկ որ և է դաւանքից, զուրկ յուսերից, ներկայումս օրէցօր աւելի ու աւելի են խորասուղուում միստիցիզմի մառախուղի մէջ: Միասուցիզմը բէակցիայի սովորական ոյժով ամեն տեղ հանդէս է գալիս ընդդէմ այժմեան կիւանքի, որի հիմքը կազմում են մարդկացին մողի պողիուիւական սահմանափակումն, իդէալների սանձահարումն, հեշտասիրութիւն և անհոգի բանկիրութիւն: Մարդկացին ոգին սկսում է քանդել այն շէնքը, որի մէջ նրան հրամայւած է բնակել, որովհետեւ այդ շինութիւնը ամեն կողմից չափից վեր նմանում է բուրսացին ինչ որ մի շրջան վերջանում է, էւոլի ցիա է սկսում բոլոր ասուարէզներում ։ Նատ անգամ ես ինձ ու ինձ զարմացել եմ մտածելով այն բանի մասին, թէ օրինակ նորագոյն մեծ վիպասանները իրանք անգամ չը գիտեն թէ որքան քիչ բան է մնում, որ իրանք միստիկ դառնան: Ոմանք արդէն գիտակցում են, որ միստիկ են և բացարձակ խոստովանում են այդ: Վերջին ժամանակներս ինչ զիրք բաց եմ արել, տեսել եմ մէջը ոչ թէ մարդկացին հոգին, ոչ թէ

կամքն ու անձնական կրքերը, այլ սարսափելի էակների կերպարանք կրող ընդհանում ճակատագրական ոյժեր, որոնք անկախ են առանձին երևոյթներից, ապրում են իրանք իրանց մէջ՝ ինչպէս Գեօթէի ամայրերը։

Դարով ինձ, հաւանօրէն ես էլ սահմանին հասել եմ Տեսնում եմ այդ և չեմ զախենում։ Անդունդը քաշում է. անձամբ ինձ այնքան սաստիկ է քաշում, որ եթէ հէնց կարողանալի, կ'ընկնէի մէջը ու կ'երթայի մինչև յատակը, և կ'երթամ՝ հէնց որ կարողանամ։

## 28 ապրիլ.

Հոգիս զմայլում է Պլոշովի կեանքից, Անելկային ամեն օր տեսնելուց և մոռանում եմ, թէ նա ուրիշն է պատկանում։ Բաք- ւում կամ ով զիսէ զուցէ մի աւելի հեռու տեղ նստած կրոմից- ին ինձ թւում է իրական զոյութիւնից զուրկ, երեւակացական մի էակ, մի չարիք, որ մի ժամանակ զալու է, այնպէս՝ ինչպէս օրի- նակ զալու է մահը, որի մասին սակացն մարդ չի մտածում։ Բայց երէկ ումենտո-ի նման մի բան պատահեց։ Ըստ երևոյթին՝ չնչին ու շնա սովորական բան։ Անելկան առաւօտեան թէլի ժամանակ երկու նամակ ստացաւ։ Հօրաքոյրս հարցրեց՝ մարդիցն է,—պատաս- խանեց՝ այսու։ Այդ որ լսեցի, այնպիսի բան զգացի, ինչպէս կը զգաց մահան դատապարտածը, որ գլխատման նախընթաց զիշերը քաղցր երազ է տեսնում ու յանկարծ զալիս զարթեցնում են, թէ պէտք է մազերը խուզել տալ ու գնայ՝ գլուխը գնի զիլիօտինի դանակի տակ։ Յանկարծ այնպէս պարզ տեսայ իմ անբախտութիւնը ինչպէս երբէք չի տեսել։ Ամբողջ օրը սիրաս չ'ազատւեց այդ չա- րագուշակ զգացմունքից, ևս առաւել որ՝ հօրաքոյրս կարծես երդ- ւել էր ինձ տանջել։ Անելկան ուզում էր նամակները թողնել՝ թէլից յետոյ ազատ ժամանակը կարդալ, բայց հօրաքոյրս ասաց, որ իս- կոյն և եթ կարդայ, և յետոյ սկսեց հարց ու փորձ անել, թէ ինչպէս է կրոմիցին։

— Ենորհակալ մ, լաւ է, - պատասխանեց Անելկան։

— Իսկ բաներն ինչպէս են գնում։

— Փառք Աստծու, գրում է, որ իւր սպասածիցն էլ լաւ են գնում։

— Ե՞րբ է վերադառնալու:

— Գրում է՝ հեսց որ հնարաւոր լինի կը գայ:

Եւ ես, այս ջղերովս, ստիպւած էի լսել այդ հարց ու պատասխանները: Եթէ որ հօրաքոյրս ու Անելիան մի աներևակալելի, ցինիկական խօսակցութիւն բանալին, դրանից աւելի չէին կարող կտրասել ջղերս: Պլոշով գալուց յետոյ այդ առաջին անգամը զայրոյիթ ու սաստիկ քէն զգացի դէպի Անելիան: «Գոնէ մի փոքր գութ ունեցիր ու իմ մօտ մի խօսիլ այդ մարդու մասին, շնորհակալութիւն մի անիլ, երբ որ հարցնում են նրա առողջութեան մասին ու մի ասիլ՝ փառք Աստծու, — մտածեցի ինձ ու ինձ: Մինչ այդ՝ նա բաց արեց միւս նամակը և նայելով ամսաթւին ասաց՝ «Այս աւելի առաջ է գրած» ու սկսեց կարդալ: Նայում էի նրա կոացրած գլխին, վարսամէջին, ճակատին ու քաշ գցած կոպերին և ինձ թւում էր, թէ այդ ընթերցումը անտանելի երկար է տեսում: Բացի այդ՝ ես այդ ժամանակ հասկացայ, որ նրանց, այսինքն Անելիալին ու Կրոմիցկուն, միացնում է ընդհանուր շահերի ու նպատակների մի ամբողջ աշխարհ, — որ նրանք կապւած են անխղելի հանգույցներով, — որ կան անհրաժեշտ պատճառներ, որոնց շնորհիւ նրանք պէտք է զգան, որ կապւած են իրար հետ ու փոխադարձարար պատկանում են միմեանց: Հասկացայ, որ ես այդ միութեան վերաբերմամբ դրսի մարդ եմ և դրսի մարդ կը մնամ, եթէ մինչև անգամ Անելիայի փոխադարձ սէրը գրաւեմ: Անելիայի հետ տեսնելուս առաջին օրից ի վեր՝ մինչև այդ րոպէին այնպէս էի զգում դժբախտութեանս խորութիւնը, ինչպէս զգացում է մառախլապատ վիհի խորութիւնը: Այժմ մառախուզը ցրեց ու ես տեսայ անգունդի վիթիսարի ծաւալը:

Սակայն ես մի յատկութիւն ունեմ, որ չափազանց ձնշման տակ սկսում եմ ընդդիմագործել: Մինչև այդ ժամանակ սէրս չէր համարձակւում որ և է բան ցանկանալ, բայց այդ րոպէին նախանձա սկսեց կատաղարար բաղձալ՝ ոչնչացնել ու ոտնակոխ անել այդ բոլոր անողոք օրէնքները, այդ կապերն ու կախումը: Անելիայի կարդալը երկու րոպէ ժամանակ հազիւ տեսեց, բայց ես այդքան ժամանակում աշխարհքում եղած բոլոր տանջանքները քաշեցի, մասաւանդ որ ըստ սովորականին ինձ ճնշում էին և ուրիշ մոռած-

մունքներ, որոնք ոչ այլ ինչ էին եթէ ոչ հիմնական վշտիս անալիզն ու քննադատութիւնը ինձ ու ինձ ասում էի օրինակ, թէ զգացած զայրոյթս ու կակիծս մի քիչ նման են խռոված կնոջ ծիծաղելի զգացմունքին, յետոյ մտածում էի, թէ այդպիսի ջղերով ապրել : ի կարելի և վերջապէս ինքս ինձ հարցնում էի, եթէ այնպիսի մի ամենահասարակ բան՝ ինչպէս այն, որ մարդը կնոջը նամակ է դրում ու կինը կարդում է գրածը, քեզ բոլորովին տակն ու վրայ է անում, հապա ինչ կը լինի, երբ որ նա դայ և դու ամեն բոլէ տեսնես ու ստուգես, որ նրանք միմեանց են պատկանում:

Մոքումն պատասխանում էի՝ կը սպանեմ նրան - և միենոյն ժամանակը զգում էի, որ սաստիկ յինար ու ծիծաղելի պատասխան է այդ:

Հասկանալի է, որ այդ աեսակ հարցումներ չէին կարող հանդստացնել ինձ: Անելիան՝ կարդալը վերջացնելուն պէս նկատեց, որ ես արտասովոր արամադրութեան մէջ եմ ու սկսեց անհանդիսող հայեացըներ քցել ինձ վրայ: Նա այն քազցր բնաւորութիւններիցն է, որոնց անհրաժեշտ հարկաւոր է շրջապատուած լինել բարեկամական մենոլորտով և որոնք այլապէս վաստ են զգում իրանց ու ահուղողի մէջ են լինում: Այդ՝ սրտի անչափ զգայութիւնիցն է յառաջանում: Յիշում եմ, որ այն ժամանակ, երբ Խւասովսկին իւր գարեջրագործ որդու մօտ չէր ճաշում, այլ մեր տանը ու հօրաքոյրս ամեն անգամ լեզւակախիւ էր տալիս նրա հետ, Անելիան քանի զեռ չը գիտէր որ այդ՝ դատարկ վէճեր են, վախենում էր և չէր կարողանում տանել նրանց կռիւները: Այժմ, երեսում էր, նրան անհանգստացնում էր իմ յուղած զրութիւնը, թէե նա չէր կարողանում հասկանալ նրա պատճառները: Մի քանի անգամ հարց տւեց ինձ կարայի կոնցերտի մասին, բայց նրա աչքերն հարցնում էին՝ ինչ է պատահել քեզ:

Սակայն ես նրան պատասխանեցի սառն հայեացքով, — չէի կարողանում նրան ներել ոչ նամակ ստանալը, ոչ էլ հօրաքրոջս հետ խօսածը: Թէյից յետոյ իսկոյն վեր կացայ և ասացի, որ պէտք է գնամ Վարշաւա:

Հօրաքոյրս ուզում էր, որ ես մնայի ճաշին ու յետոյ, ինչպէս առաջուց պայմանաւորել էինք, միասին գնայինք կոնցերտ: Բայց

ես պատասխանեցի, թէ մի քանի գործ ունեմ Վարշաւյում անելու, և յիրաւի սաստիկ ուզում էի մենակ մնալ: Պատիրեցի՝ կառքը լծել, իսկ հօրաքոյլու ասաց.

—Ուզում եմ մի կերպ շնորհակալութիւն ցոյց տալ Հիլսախն. մտածում եմ, լաւ չի լինիլ արդեօք՝ մի օրով հրաւիրեմ նրան այստեղ:

Երևում էր, հօրաքոյլու Պլոշով հրաւիրելը այն աստիճան մեծ մեծարանք էր համարում, որ երկմտում էր, թէ արդեօք այդ շափեց վեր չի լինիլ Կլարայի համար:

Մի բոսկ անցած աւելցրեց.

—Եթէ հաւաստի լինէի, որ նա լաւ հասարակութեան պատկանող կին է...

—Օրիորդ Հիլսուր Ռումենիայի թագուհու բարեկամուհին է, պատասխանեցի ես անհամբերութեամբ,—և ամեն տարի՝ շաբաթներով նրա մօտ հիւր է լինում: Եթէ նրա այստեղ գալը պատիւպէտք է համարւի, մեզ համար պէտք է համարւի:

—Է՛, լմւ, լմւ,—մըմրթաց հօրաքոյլու:

Մնաս բարեւ անելիս դարձայ դէպի Անելիան:

—Իսկ դու կը գմս կոնցերու:

—Պէտք է մայրիկի մօտ մնամ և, բացի այդ, նամակ պէտք է գրեմ:

—Որ բանն ընկաւ կարօտած ամուսնու զգացմունքին, ես փառակզբի բոպէկին այդ հեզնական խօսքերը սփոփեցին սիրտս: Թող գիտենայ, որ խանջոտ եմ, մտածեցի ես. նա էլ՝ հօրաքրոջս ու խւր մօր նման՝ այն հրեշտակասանակ կանանցիցն է, որոնք չարի զոյւթիւնը չեն ընդունում: Թող ուրեմն հասկանայ, որ ես իրան սիրում եմ, թող այդ միտքը բուն զնի նրա սրտում, թող նա լնտելանայ այդ գաղափարին, թող սկսի անհանդիսու լինել նրանից, թող մաքառի նրա դէմ: Նրա հոգու մէջ այլպիսի խորթ ու քայլքայիչ տարր, այլպիսի խմոր մացնելը գրեթէ յաղթութիւն է: Տեսնենք ինչ կը լինի վերջը:

Այդ՝ բոպէկական սփոփանք էր, բայց սաստիկ սփոփանք՝ նման շարախնդացութեան: Սակայն հէնց որ նստեցի կառքը բարկութիւն ու դժգոհութիւն զգացի ինքս ինձ դէմ: Այդ դժգոհութիւնը նրա-

նից էր յառաջանում, որ զգում էի, որ բոլոր ասածներս ու մտածածներս մանր ու չնշին բաներ էին և հիմնած էին՝ աւելի հիստերացին կնոջ քան տղամարդի վայել խեղաթիւրւած ու քմահաճ ջղերի վերաց։ Նատ վատ էի զգում ինձ ամրողջ ճանապարհին, — աւելի վատ՝ քան այն ժամանակի, երբ արտասահմանից վերջին վերադարձից յետոյ առաջին անգամ՝ Պլոշով էի գնում։ Միտք էի անում, թէ այն կենսական սարսափելի անընդունակութիւնը, որ ճակատակազրի պէս ծանրանում է ինձ նման մարդկանց վրայ ընդհանրապէս՝ իսկ ինձ վրայ մասնաւորապէս, նրանից է յառաջանում, որ մեր բնաւորութիւնների մէջ կանացի տարրը գերակշռում է առնականին։ Ասելս այն չէ, թէ իրը մենք ֆիզիկապէս կնատ, վախկու ու անեւանդ մարդիկ ենք։ Ու ասածս բոլորովին ուրիշ բան է, եռանդ ու արիստթիւն, եթէ ոչ աւելի, գոնէ այնքան ունենք՝ որքան և ամենքը. Անզնից իւրաքանչիւրը առանց այլւայլութեան կը նստի անսանձ ձիու վրայ և ուր ուղէք կ'երթաց։ Բայց հոգեկան տեսակէտից ամեն մէկիս մասին կարելի է ասել — նէ և ոչ նա։ Մեր հոգեկան կազմի մէջ չկայ հանգիստ, սինթետիկական և չնշին բաները արհամարհող հաւասարակշռութիւն։ Ամեն չնշին բան սիրուներս ցաւացնում, զառնացնում ու վհատեցնում է, որի շնորհիւ մենք ամեն մի քայլափխում անչափ մեծ բաներ զոհում ենք անչափ փոքր բաների։ Իմ անցեալը ապացոյց է դրան։ Զէ որ՝ ես զոհեցի ամրողջ կեանքիս անպատմելի երջանկութիւնը, իմ ապագան և սիրածս կնոջ ապագան միմիայն այն պատճառով, որ հօրաքրօջ նամակում կարդացի, թէ Կրոմիցին մտադրութիւն ունի ուղել Անելիալին։ Զղերս սանձակուոր փախցրեցին ինձ ու տարան այնտեղ, ուր ամենեին մտադիր չէի գնալ։ Այդ ոչ այլ ինչ էր եթէ ոչ կամքի հիւանդութեան արտայացութիւն։ Բայց արդ տեսակ հիւանդ են լինում ոչ թէ նրանք, այլ նէր անք։ Ել ինչու պէտք է զարմանալ, որ այժմ էլ հիստերիկալին կնոջ պէս եմ վարում։ Այդ մի դժբախտութիւն է, որ ինձ հետ միասին է աշխարհ եկել և որ յառաջացրել են մի շարք սերունդներ ու կեանքի այն պայմանները, որոնց մէջ մենք ստիպւած ենք ասդրել։

Բայց այդպիսով պատասխանառութիւնը վրայից վերցնելը ամենեին չը սփոփեց սիրաս։ Միտքս դրել էի Վարշաւա հասնելուա

պէս այցելել կլարային, բայց մինչև տեղ համնելս սարսափելի գլուխացաւ բռնեց ինձ ու անցաւ միայն երեկոյեան՝ հօրաքրոջն գալուց մի քիչ առաջ:

Հօրաքոյրս որ եկաւ, ես արդէն հազնւած՝ պատրաստ էի և մենք շուտով զնացինք կոնցերու, որ չափազանց յաջող էր զլուխ եկել: Կլարայի հռչակը գրաւել էր ինտելիլենտ ու երաժշտական աշխարհը, իսկ բարեգործական նպատակը՝ ամբողջ բարձր հասարակութիւնը: Մանօթներ շատ կային, ի միջի այլոց Մնեաաինսկիները: Դահլիճը լիքն էր: Բայց այնպէս վատ էր տրամադրութիւնս ու ջղերս այն աստիճան խանգարւած էին, որ ամեն ինչ ինձ զայրացնում էր: Զը գիտեմ ինչու ահ ծագեց սրտումս, թէ կլարան ֆիասկօ կը կրի: Էստրադան բարձրանալիս մի աֆֆիշա կպաւ նրա շորիցը և նա փէշովը քաշ տալով տարաւ հետը: Ինձ թւաց թէ այդ՝ նրան ծիծաղելի է դարձնում: Նա՝ պարահանդէսի շորը հագին ու ամրոխի սև ֆոնից էստրադայի դատարկ տարածութեամբ բաժանւած՝ ինձ վրայ աւելի անծանօթ արտիստունու տպաւորութիւն էր գործում քան մօտիկ ծանօթի ու բարեկամի: Ակամայ ինքս ինձ հարց էի առաջարկում, միթէ այդ՝ այն կլարան է, որի հետ ես կապւած եմ սերտ բարեկամական զգացմունքով: Մինչ այդ՝ ողջունական ծափահարութիւնները դադարեցին: Հանդիսատեսների երեսներին երևաց այն իրը խելացի կետրոնացումն ու ուշադրութիւնը, որոնց շնորհիւ գեղարւեստի մասին ամենենին գաղափար չ'ունեցող մարդիկ գիտակ ու դատաւոր են ձեւանում: Կլարան նստեց ածելու և թէպէտ չարացած էի նրա վրայ ինչպէս և ամբողջ աշխարհի վրայ, մոքումս պէտք է խոստովանւէի սակայն, որ նա ոտից մինչև զլուխ չափից վեր պարզ է ու ազատ սեթեւթանքից, զլուխը աղնիւ է ու թեթևակի յեւած և տեպը արտիստական Սկսեց ածել Մենդելսոնի կոնցերտը, որը ես անզիր յիշում եմ;—և նրանից էր արդեօք, որ զում էր թէ իրանից չափազանց մեծ բան են սպասում, թէ նրանից, որ յուզւած էր արտասովոր սրտադին ընդունելութիւնից, ինչ և իցէ՝ նա սպասածից վատ սկսեց ածել: Այդ ինձ սաստիկ տհաճութիւն պատճառեց: զարմացած նայում էի կլարային և մեր հայեացքները մի բոպէով իրար հանդիպեցին: Դէմքիս արտայալութիւնը վերջնականապէս շփոթեցրեց նրան և ես դար-

ձեալ լսեցի մի քանի և անորոշ և պատշաճաւոր ոչժից ու արտայայտութիւնից զուրկ բաղխուռմներ Արդէն հաւատացած էի որ վիխասկօկը կրի: Երբէք դաշնամուրը իւր հնչիւններով, որոնց պակասութիւնը ծորութեան կողմից աւելի ևս սաստկանում էր դահլիճի ընդարձակութեան և բազմութիւնից խլացած ակուստիկայի շնորհիւ, չեր թւացել ինձ այդքան ողորմելի իրրեւ կոնցերտային դործիք: Երբեմն-երբեմն ինձ թւում էր թէ տաւիզի (որՓՈ) ընդհատող հընչիւններ եմ լսում: Մի քիչ ժամանակից յետոյ կլարայի այլայլութիւնն անցաւ, սակայն ըստիս ամբողջ կոնցերտը միջակ ածեց: Կատարելապէս ապշած մնացի, երբ որ վերջացնելուց յետոյ այնպիսի ծափահարութիւններ թնդացին, որոնց նմանը երբէք լսած չեմ Պարիզում, ուր կլարային ընդունում են արտակարգ յափշտակութեամբ: Երաժշտագէտաները վերկացան տեղներիցն ու սկսեցին տաք-տաք խօսել րիցենզենսների հետ. նրանց զւարթացած երեմներին ակներեւ զւարճութիւն էր արտափիալլում: Ծափահարութիւնները չը դադարեցին մինչև որ կլարան դուրս չեկաւ էստրադան նա գուրս եկաւ. աչքերը քաշ զցած և ես, որ գիտեմ կարգալ նրա դէմքի արտայայտութիւնը, պարզ կարդացի, — Շնատ բարի էք, շնորհակալ եմ, բայց վատ ածեցի և լաց դալիս էս: Ես էի ծափահարում, որի համար ստացայ նրանից թուցիկ, յանդիմանութեամբ լի հայեացք: Կլարան այն սատիճան սաստիկ է սիրում գեղարւեսար, որ անհիմն ծափահարութիւնները նրան զւարճութիւն պատճառել չեն կարող: Խեղճս գալիս էր նրա վրայ. ուզում էի գնալ ու մի քանի միսիթարական խօսք ասել նրան, բայց անվերջանալի բրաւօները չէին թողնում որ էստրադայից իշնէր: Նա նորից նստեց ու սկսեց ածել նէթովէնի Cis-mol տոնատան, որ յայտագրում չկար:

Հստ իս աշխարհքումն չը կայ մի ուրիշ երկասիրութիւն, որի մէջ այդ սատիճան պարզ երևար ինչ որ արագիկական անհանդըստութիւնից կսկծահար եղող մարդկային հոգին: Խօսքս զլիսաւորապէս վերաբերում է սոնատայի երրորդ մասին— «presto agitato»-ին: Այդ տրամադրութիւնը երեւի համապատասխանում էր կլարայի բոպէկան գրգռմանը և անկասկած ներդաշնակում էր իւր տրամադրութեանը, այնպէս որ կեանքումս լսած չը կամ նէթովէնի երա-

ժշտութեան այլպիսի նւագումն և երբէք այդ աստիճան կատարեալ չեմ ըմբռնել նրան ևս երաժշտագէտ չեմ, բայց կարծում եմ, երաժիշտներն էլ մինչև այդ ժամանակ չը գիտէին թէ որքան բան է պարունակում այդ սոնատայի մէջ։ Ուրիշ ոչինչ չեմ գտնում ամենքի կրած տպաւորութիւնը որոշելու համար՝ քան ճնշումն խօսքը։ Մարդ զգում էր, թէ ինչ որ չափազանց տիսուր, անկերպարան, լուսնի լոյսով աղօտ լուսաւորւած անաշխարհիկ անապատ, որի մէջ աղաղակում է, հառաջում ու մազերը փետում լուսահատ վիշտը։ Այդ և՛ զարհուրելի էր և՛ հրաշալի, որովհետեւ կարծես ան աշխարհումն էր կատարում, և միւնոյն ժամանակը անդիմադրելի զրաւիչ, որովհետեւ, զոնէ իմ վերաբերմար, երաժշտութիւնը երբէք այդ աստիճան չէր մօտեցրել ինձ ինչ որ բացարձակ (absolu) բանի։ Ուրիշներից աւելի ապաւորւող չը լինելով, ես զրեթէ հալլիցինացիայի մէջ էի ընկել։ Ինձ թւում էր թէ այդ անապատում, այդ անկերպարան, այդ անդրդերեզմանային խաւարում որոնում եմ մի էակի, որ աւելի թանկ է ինձ համար քան ամբողջ աշխարհը, առանց որի ապրել անհնար է ինձ համար, առանց որի ապրել չեմ կարող, չեմ ապրիլ և որոնում եմ այն համոզմունքով, թէ յաւիտեանս պէտք է փնտուեմ նրան և երբէք չը գրտնեմ։ Սիրոս այնպէս ճմլւում էր, որ շնչասպառ ում էի։ — ամենեւին ուշք չը դարձրի նւագածութեան արտաքին կողմի վրայ, որը անշուշտ պէտք է հասած լինէր այն կատարելութեան, որի ժամանակ արդէն այլ ևս խօսք չի լինում նրա մասին։ Ամբողջ դահլիճը՝ Կլարան էլ մէջը՝ նոյն տպաւորութեան ներքոյ էր։

Ածելլ որ վերջացրեց, բաւական ժամանակ մնաց նատած՝ գլուխն ու աչքերը վեր բարձրացրած, դէմքը գունաթափ և բերանը կիսաբաց։ Եւ այդ՝ բեմական էֆֆեկտ չէր, այդ՝ պարզ, ամեն կասկածից բարձր ոգեորութիւն ու ինքնամոռացութիւն էր։ Դահլիճում տիրում էր խորին լուսութիւն, կարծես հանդիսատեսները էլի մի բանի էին սպասում, կարծես քարացել էին վշտից կամ թէ ականջները սրել էին լսելու վերջին արձագանքը այն լալահառաչ յուսահատութեան, որ թոցրել՝ տանում էր անաշխարհային մըրիկը։ Յետոյ այնպիսի բան եղաւ, որ երեխ երբէք ոչ մի կոնցերտում չի

եղել։ Այնպիսի աղաղակ բարձրացաւ, կարծես հանդիսատեսներին մի սարսափելի աղէտ էր սպառնում։ Մի քանի բեցենզինոներ ու երաժշտագէտներ մօտեցան էստրադային։ Տեսնում էի՝ դէպի կլարայի ձեռները խոնարհւած գլուխներ։ Նրա աչքերը արտասւակալած էին, բայց դէմքը ոգևորւած էր, պայծառ ու հանգիստ։ Գնացի ուրիշների հետ միասին սեղմելու նրա ձեռքը։

Մեր ծանօթութեան սկզբից մինչև այդ րոպէն Կլարան միշտ ինձ հետ վրանսերէն էր խօսում, իսկ այժմ պինդ սեղմելով ձեռքս առաջին անգամը հետո գերմաներէն խօսեց։

—Haben Sie mich verstanden?—հարցրեց նա ինձ։

—Ja,—պատասխանեցի ես,—und ich war sehr unglücklich<sup>1)</sup>։

Ասածս ճիշտ էր։ Կոնցերտի շարունակութիւնը կլարայի համար անընդհատ վայլուն յաղթանակ էր։ Վերջացնելուց յետոյ Սնեատինսկիները նրան տարան իրանց տունը երեկոյթի։ Ես չը գնացի, —սիրո չունէի։ Տուն որ վերադարձայ այն աստիճան յոդնած էի զգում ինձ, որ առանց հանւելու ընկայ բազմոցի վրայ ու այդպէս մօտ մի ժամ զարթուն սպառկած մնացի։ Յիշատակարան զրել սկսելուց մի քանի րոպէ առաջ միայն նկատեցի, որ շարունակ մտածում եմ դպրի թաղման, Անելկայի և մահւան մասին։ Յետոյ պատւիրեցի ճրագ վառել ու զրիչը ձեռքս առայ։

(Կը շարունակի)

1) —Հասկացաք, —հարցրեց նա ինձ։

—Այս, պատասխանեցի ես, —և շատ դժբախտ եմ։